

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՂԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Պ-1354-13.05.2026-ԱՌՀ-011/0) ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ( Պ-1354-13.05.2026-ԱՌՀ-011/0) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ Ի ՈՐՈՇՈՒՄԸ
<p>ՀՀ արդարադատության նախարարություն</p>	<p>«ՂԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Պ-1354-13.05.2026-ԱՌՀ-011/0) օրենքի նախագիծ</p>	<p><b>«Դեղերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով</b> (այսուհետ՝ Նախագիծ 1) նախատեսվում է կարգավորել բժշկական հաստատության դեղատնների գործունեությանը ներկայացվող պահանջները, ինչպես նաև այդ դեղատների գործունեության իրականացման կարգը: Սակայն պարզ չէ, թե նշված երկու հասկացություններն ինչ բովանդակային տարբերություն ունեն և ինչ հարաբերակցության մեջ են գտնվում միմյանց հետ: Մասնավորապես, «գործունեությանը ներկայացվող պահանջները» կարող են ներառել նաև գործունեության իրականացման պայմանները, ընթացակարգերը և կանոնները, ինչի արդյունքում «գործունեության իրականացման կարգ» ձևակերպման ինքնուրույն կարգավորման առարկան հստակեցման կարիք ունի: Այս առումով նպատակահարմար է հստակեցնել, թե ինչ հարցեր են ընդգրկվում գործունեությանը ներկայացվող պահանջների շրջանակում, և ինչ լրացուցիչ կարգավորումներ են ներառվելու գործունեության իրականացման</p>	<p>Պարզաբանում: «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը կանոնակարգելով Հայաստանի Հանրապետությունում դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի եւ հետազոտվող դեղագործական արտադրանքի շրջանառության հետ կապված հարաբերությունները՝ 3-րդ հոդվածի 1-ին մասի 46-րդ կետով նախատեսել է, թե ինչ է բժշկական հաստատության դեղատունը, սակայն Օրենքը որեւէ կանոնակարգում չի նախատեսել, որով կամ կսահմանվի ինչ կարգով է իրականացվում բժշկական հաստատության դեղատնից դեղերի բացթողնումը, նախատեսված չէ նաեւ վերոնշյալ կարգը սահմանելու</p>	<p>Չի ընդունվել</p>

		<p>կարգում՝ բացառելով կարգավորման առարկայի հնարավոր համընկնումը և ապահովելով իրավական որոշակիությունը:</p> <p>Վերոգրյալի համատեքստում նույն տրամաբանությամբ խնդրահարույց կարող է դիտարկվել նաև նախագծի հաջորդ կարգավորումը, որով վարչական պատասխանատվություն է նախատեսվում բացառապես բժշկական հաստատության դեղատների գործունեության իրականացման կարգի խախտման համար: Եթե օրենսդիրը միաժամանակ առանձնացնում է «գործունեությանը ներկայացվող պահանջները» և «գործունեության իրականացման կարգը», ապա հստակ չէ, թե ինչու վարչական պատասխանատվության հիմք է հանդիսանում միայն վերջինիս խախտումը, իսկ գործունեությանը ներկայացվող պահանջների չպահպանումը դուրս է մնում պատասխանատվության կիրառման շրջանակից:</p> <p>Նման կարգավորումը կարող է հանգեցնել իրավական անորոշության և իրավակիրառ պրակտիկայում տարաբնույթ մեկնաբանությունների, քանի որ պարզ չէ՝ գործունեությանը ներկայացվող պահանջների խախտումը ենթակա է արդյոք պատասխանատվության, թե ոչ: Միաժամանակ, եթե «գործունեության իրականացման կարգ» հասկացությունն իր բովանդակությամբ ներառում է նաև գործունեությանը ներկայացվող պահանջները, ապա դրանց տարանջատումն օրենսդրական տեքստում կորցնում է իր ինքնուրույն նշանակությունը: Հաշվի առնելով վարչական պատասխանատվության իրավական որոշակիության (lex certa) սկզբունքի</p>	<p>համար լիազորող նորմ: Արդյունքում, բժշկական հաստատության դեղատան կողմից դեղերի բացթողնման գործընթացը գրեթե մնացել է անվերահսկելի, մինչդեռ ՀՀ առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմնում հաճախ քաղաքացիներից, կազմակերպություններից ստացվում են տեղեկատվություններ բժշկական հաստատությունում չգրանցված, ժամկետանց, որակի պահանջներին չհամապատասխանող դեղերի կիրառման մասին: Հարուցված վարչական վարույթների ընթացքում արձանագրել նման դեպքերի առկայություն չի հաջողվում՝ բացի բուժառուի համար վարվող պատմագրից այլ փաստաթղթերի բացակայության պատճառով:</p>	
--	--	---	--	--

		<p>պահանջները՝ նպատակահարմար է հստակեցնել նշված հասկացությունների բովանդակությունը և դրանց փոխհարաբերակցությունը, ինչպես նաև վերանայել վարչական պատասխանատվություն նախատեսող դրույթի ձևակերպումը՝ բացառելու համար պատասխանատվության հիմքերի վերաբերյալ անորոշությունը և ապահովելու իրավական նորմերի կանխատեսելի ու միատեսակ կիրառումը:</p>		
<p>ՀՀ արդարադատության նախարարություն</p>	<p>«ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Պ-1354-13.05.2026-Առ&lt;011/0) օրենքի նախագիծ</p>	<p>Նախագիծ 1-ի 3-րդ հոդվածով նախատեսվում է «Դեղերի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 26-րդ հոդվածի 1-ին մասը լրացվում է նախադասություններով, որի համաձայն՝ պիտանիության ժամկետը լրացած, չգրանցված, կեղծ, օգտագործման համար ոչ պիտանի, օրենքի խախտմամբ ներմուծված, անորակ, չհայտարարագրված բաղադրատարրեր պարունակող դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի, հետազոտվող դեղագործական արտադրանքի ոչնչացում իրականացնող լիցենզավորված իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ (այսուհետ՝ ոչնչացնող) կողմից էլեկտրոնային փոստով դեղերի շրջանառության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած՝ վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնին առնվազն 5 աշխատանքային օր առաջ տրամադրում է ոչնչացում իրականացնելու վերաբերյալ տեղեկություն՝ ոչնչացման ենթակա դեղի անվանման, քանակի (դեղահատ, դեղապատիճ, ամպուլա, տուփ, քլիստեր, սրվակ, փամփուշտ, գրիչ-ներարկիչ, փաթեթիկ և այլն), սերիայի, պիտանիության ժամկետի, ոչնչացման վայրի, ժամի, ոչնչացում իրականացնելու համար</p>	<p>Պարզաբանում: Նախագծում արձանագրված է, որ ոչնչացնողը <b>վտանգավոր թափոնների ոչնչացմանը</b> ներկայացվող պահանջներին է համապատասխանելու, այսինքն, վտանգավոր թափոնների գործածության համար լիցենզավորված իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ մասին է խոսքը: Հետևաբար, «Լիցենզավորման մասին» օրենքով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը 43-րդ հոդվածով թվարկված գործունեության «վտանգավոր թափոնների գործածության» մեջ մտնում են նաև դեղերը և դեղանյութերը:</p>	<p>Չի ընդունվել</p>

		<p>դիմողի(ների) տվյալների վերաբերյալ: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ «Լիցենզավորման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիցենզիան տրվում է միայն սույն օրենքով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեության յուրաքանչյուր տեսակի համար, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: Իսկ նույն օրենքի 43-րդ հոդվածում թվարկվում են գործունեության այն տեսակները, որոնք ենթակա են լիցենզավորման, որոնց մեջ առկա չէ դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի, հետազոտվող դեղագործական արտադրանքի ոչնչացման իրականացումը: Ուստի վերոնշյալի համատեքստում Նախագիծ 1-ինն անհրաժեշտ է վերանայել՝ գործնականում սահմանվող նորմերի կիրառելիությունն ապահովելու համար:</p>		
<p>ՀՀ արդարադատության նախարարություն</p>	<p>«ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Պ-1354-13.05.2026-Ան&lt;011/0) օրենքի նախագիծ</p>	<p>«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «5. Եթե օրենսդրական ակտով (բացառությամբ Սահմանադրության) սահմանված նորմը կարող է կատարվել միայն այդ ակտով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, ապա օրենսդրական ակտի անցումային դրույթներով սահմանվում են նաև՝ 1) օրենսդրական ակտի այն մասերը, որոնք գործելու են ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից. 2) ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման նախատեսվող ժամկետը:» Հարկ է նկատել, որ հիմք ընդունելով վերոգրյալ դրույթը, անհրաժեշտ է Նախագծի անցումային</p>	<p>Պարզաբանում: Նախագծերի անցումային դրույթներում ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման ծամկետները սահմանելիս հաշվի է առնվել ուժի մեջ մտնելու հաջորդականությունը: Ելնելով նախագծի առաջին ընթերցման համար լրամշակման ժամանակ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿԸ ժամկետները հստակցվել են: Վարչական պատասխանատվության համար նյութական հիմք հանդիսացող</p>	<p>Չի ընդունվել</p>

		<p>դրույթներին վերաբերող հողվածում նախատեսել նաև օրենսդրական ակտի այն մասերը, որոնք գործելու են ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից, ինչը հիմնավորվում է այն հանգամանքով, որ վարչական պատասխանատվության համար նյութական հիմք հանդիսացող կարգավորումների գործելու պահը նախագծերի փաթեթով անհրաժեշտ է հստակ նախատեսել:</p>	<p>կարգավորումների համար նախատեսվել է օրենքը ուժի մեջ մտնելուց 8 ամիս հետո:</p>	
<p>ՀՀ արդարադատության նախարարություն</p>	<p><b>ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ</b> (Պ-1354/-13.05.2026-ԱռՀ-011/0) օրենքի նախագիծ</p>	<p>«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 47.3-րդ հոդվածում լրացվող նոր 25-րդ մասի 2-րդ կետում առաջարկվող կարգավորման շրջանակում ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ 5-ից ավելի դեղի փաթեթի դեպքում նախատեսվում է միևնույն չափի վարչական տուգանք՝ անկախ ոչնչացման ենթակա դեղերի քանակից: Այսպիսով, նույն պատասխանատվությունն է նախատեսվում ինչպես, օրինակ, 6, այնպես էլ 60 կամ 200 փաթեթ դեղերի դեպքում, ինչը բավարար չափով չի արտացոլում կատարված խախտման ծավալի և հանրային վտանգավորության աստիճանի տարբերությունները: Նման մոտեցումը կարող է խնդրահարույց դիտարկվել համաչափության սկզբունքի տեսանկյունից, քանի որ վարչական պատասխանատվության միջոցները պետք է գտնվեն ողջամիտ հարաբերակցության մեջ խախտման բնույթի, ծավալի և դրա հնարավոր հետևանքների հետ: Մինչդեռ նախագծով 5-ից</p>	<p>Պարզաբանում: Նշված մոտեցումներն ամրագրվել են նախագիծը ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ նիստում քննարկվելուց առաջ, փոխվարչապետ ՄՀԵՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ մոտ տեղի ունեցած ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏՈՒՄ ՀՆՉԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ:</p>	<p>Չի ընդունվել</p>

		<p>ավելի փաթեթների համար սահմանվում է միասնական պատասխանատվություն՝ առանց վերին կամ միջանկյալ շեմերի նախատեսման, որի արդյունքում էականորեն տարբեր ծավալի խախտումները կարող են հանգեցնել նույն իրավական հետևանքին:</p> <p>Այս առումով նպատակահարմար է քննարկել պատասխանատվության առավել տարբերակված համակարգի ներդրման հնարավորությունը՝ սահմանելով լրացուցիչ շեմեր կամ այլ չափորոշիչներ, որոնք հնարավորություն կտան առավել համաչափ կերպով գնահատել խախտման ծավալը և ապահովել վարչական պատասխանատվության անհատականացված կիրառումը:</p> <p>Նույն համատեքստում վերանայման անհրաժեշտություն կարող է առաջանալ նաև հոդվածի 26-րդ մասի կապակցությամբ, որով նախատեսվում է, որ նույն արարքը կրկին կատարելու դեպքում կիրառվում է նախորդ դեպքի համար նշանակված տուգանքի կրկնապատիկը:</p> <p>Մասնավորապես, առաջարկվող կարգավորման պայմաններում հնարավոր է իրավիճակ, երբ առաջին խախտումը վերաբերել է զգալի քանակի դեղերի (օրինակ՝ 5-ից ավելի փաթեթների), որի համար նշանակվել է առավել բարձր չափի տուգանք, մինչդեռ հետագա խախտումը կարող է վերաբերել էականորեն ավելի փոքր քանակի դեղերի, սակայն դրա համար, անկախ խախտման ծավալից, կիրառվելու է նախորդ տուգանքի կրկնապատիկը: Արդյունքում, պատասխանատվության չափը կարող է պայմանավորված լինել ոչ թե տվյալ խախտման իրական ծավալով և վտանգավորության աստիճանով, այլ բացառապես նախորդ</p>		
--	--	--	--	--

		<p>խախտման համար նշանակված տույժի չափով: Նման կարգավորումը կարող է հանգեցնել անհամաչափ իրավական հետևանքների և լիարժեքորեն չարտացոլել վարչական պատասխանատվության անհատականացման և համաչափության սկզբունքները, համաձայն որոնց՝ պատասխանատվության միջոցը պետք է գտնվի ողջամիտ հարաբերակցության մեջ տվյալ իրավախախտման բնույթի, ծավալի և հանրային վտանգավորության աստիճանի հետ: Ուստի նպատակահարմար է քննարկել կրկնակի խախտման համար պատասխանատվության չափը որոշելիս նաև տվյալ խախտման ծավալը և այլ էական հանգամանքները հաշվի առնելու հնարավորությունը:</p>		
--	--	---	--	--